



83. ԽՄԱՍՏՈՒՆ ԶՈՒԼՅԱԿ

Թագավորն ու վագիր թաբդիլ կէղնին, գելնան մըշ էրկրին կը
յվունին, ժողովրդի հալն ու վախթն յիմնան: Կը մտնան գեղ մե,
կը տեսնան, օր վըր տան մե տանքին աղուն կա փռուկ, մըջ աղու-
նին էրկու քերկեն խամիշ տնկուկ, քամին օր զխամըշներ կը տանե
բերե՝ հավ ու ճիվ կը փախնին, զաղուն շուտին:

Թագավոր մառախլամիշ կէղնի. կը մտնան ներս, կը տեսնան՝
չուլչակ էրկու օրորոց դրեր է հըտ կշտին, աջ ձեռքով օր զմքուք
կը թալե, աջ դիու օրորոց կօրորվի, ձախ ձեռքով օր զմքուք կը
թալե, ձախ կշտի օրորոց կօրորվի:

Թագավոր կը զարմանա:

— Իդա մարդու տակ շատ բան կա,— կըսե,— զէդի պտի փոր-
ձիմ, տեսնանք տակեն գելնա՞. թե քելա՞վ, զջուլչակ պտի թոզիմ
վաղիրի փողպատ, տեսնանք ի՞նչ դուս գիկա:

Կը մոտենա, բարե կիտա.

— Սալամ ալեքըմ, հոսթանըն փիրի:

— Ալեքըմ սալամ, ալամըն սարգարի:

— Դաղլար նա՞ հալդա:

— Թափասընա խառ շոքմիշտըր:

— Իրաղտա՞ն նասըլսան:

— Իրաղի յախին էթմիշամ:

— Իքիսընդա՞ն նասըլսան:

— Իբիսի ուշ էթմիշամ:

— Բիր խազ յոլլայիմ, սոյա բիլո՛ւրսան:

— Փեք հոսթասի ամ:

Գեյնան դուս, թագավոր վազիրին կըսե.

— Ես ջուլչակից ի՞նչ հարցուցի, ջուլչակն ընձի ի՞նչ ջուլար տվեց, գիմնաս, ընձի կը պատմիս, թե չէ՝ քու էրթըլուօ օրն է:

Վազիր կը շիվրի մնա, կէրթա գընկնա ջուլչակի յոտ ու ձեռք, թե՛ «Քու բախտն իմ չընկի, թագավոր քըզնե ի՞նչ բաներ հարցուց, դու ի՞նչ ջուլար տվիր, մեկ-մեկ ըսե ընձի, թե չէ՝ իմ էրթըլուօ օրն է»:

Ջուլչակ նազ ու տուզ կէնե, վազիր զուր օսկու քիսըք կը դարտըկե ջուլչակի յառջև: Ջուլչակ զօսկիք կը ծրարե, կըսե.

Թագավորն ըսեց՝ բարև, վարպետների պետ:

Ես ըսի՝ բարև, աշխարհի վեհապետ:

էն ըսեց՝ սարերն ի՞նչ հալի են:

Ես ըսի՝ գլխներուն ձուն է նստի:

էն ըսեց՝ հեռվից իմա՛լ իս:

Ես ըսի՝ հեռուն մոտեցուցեր իմ:

էն ըսեց՝ էրկուսից իմա՛լ իս:

Ես ըսի՝ էրկուսն իրեք իմ էրի:

Վազիրն ըսեց՝

— Վարպե՛տ, ըպա էն խազն ի՞նչ էր, օր թագավոր խոստ էկա:լ
Ճամպեր քըզի:

Ջուլչակն ըսեց.

— Վազի՛ր աֆանգի, էն խազն ըշտե դո՛ւ էս, զքիսեդ դարտը-
կեցի՛՝ զքու թերուրներ լե թերեցի, մկա հասկըցա՛ր:

